

ու կը միացընէ :

Բարեգործութեան՝ եռանդուն շը նորհակալութենէ զատ՝ ուրիշ կերպով չենք կրնար հատուցմունք ընել :

Սարգս իր երջանկութիւնը կը շատցընէ՝ բարեկամին ալ անկէ բաժին հանելով :

Սեր սուրբ հաւատքը կը պատուիրէ՝ որ միայն բարեգործութեամբ մեր թշնամիներէն վրէժ առնենք :

Սէկ բան մը մեր աչքը այնպէս չզուարճացընէր, ինչպէս անոնք՝ որոնց բարիք ըրեր ենք :

Նխոհեմ մարդը կնիքը քակուած նամակ կը նմանի . ո՛վ որ ուզէ կրնայ կարդալ :

Նստուած ոմանց հարկաւորը կու տայ ապրելու համար, ոմանց ալ մը խիթարութիւն՝ աղէկ մեռնելու համար :

Սիայն առաքինութեամբ մարդս իր վիճակին մէջ երջանիկ կ'ըլլայ ու առաջ կ'երթայ :

Սաղցողներու բաղդը իրենց ձգած քուէներուն պէս շուտ շուտ կը փոխուի :

Սվոր Նստուծմէ կը վախնայ, միայն անկէ կը վախնայ :

Սեր վախովը վրանիս գալու ձախորդութիւնը կը շուտցընենք :

Սարգս ինչպէս կրնայ մեռածներէն օրինակ առնել, երբոր կենդանեաց ըրածն ալ տեսնելու աչք չունի :

Սայծակը ամենէն բարձր ծառերը կը զարնէ :

Սարկութեան ժամանակ զուրցած խօսքերնիս՝ խիստ քիչ անգամ կ'ըլլայ որ ետքէն մեզի ցաւ չտան :

Սուրբութիւնն ու դատարկութիւնը խեղճութեան առաջնորդներն են :

Սրբիւնն սիրոյ օրինակ :

ՍՍԱՍԱՍԱՍԱՍ կղզւոյն վրայ գըրուած յօդուածի մը մէջ աս սրտաշարժ դիպուածը կը պատմուի, որ մեր Սազմավէպը կարդացող պատանինե-

րուն կրնայ օգտակար ըլլալ :

Ս կղզիիս վերջի թագաւորը Սատամա, որ 1810⁶⁵ տասնութ թ տաւրուան թագաւորեց, շատ խելացի և ուսումնասէր մարդ էր : Իր պզտիկութեան ատեն ըրած մէկ գործքէն կըրնայ իմացուիլ իր բարի սիրտը : Սատաման իր մօրը վրայ շատ սէր ունէր . ուստի խիստ տրտմեցաւ երբոր իր հայրը փուճ բանի մը համար դուրս ըրաւ իր թագուհին : Երկրորդ օրը երբոր թագաւորը ուրիշ տեղ գնացեր էր, տղան գնաց վառելի՝ մը բերաւ ու աթուռի մը ոտքին կապեց . երբոր հայրը տուն դարձաւ ու խեղճ վառելի տեսաւ որ կապուած տեղը կը չարչարուի, հարցուց տղուն թէ ինչ բան է . “ Բան չկայ, ըսաւ տղան . պզտի վառելի մըն է որ իր մօրմէն բաժնուելուն վրայ կը ցաւի ” : Թագաւորը իմացաւ տղուն միտքը, ու մէկէն ան օրը նորէն տուն դարձուց Սատամային մայրը :

Սխալաւ վրայ քանի ճ գիտելի :

ՉԿԱՅ անանկ զուարճալի կարողութիւն մը մտաց, ինչպէս գիտնալը՝ խելացի խօսքերով ու պատմութիւններով ուրիշներուն ծիծաղը շարժել : Սխալ և ոչ ուրիշ զօսանքներ այնպէս կը զուարճացընեն ընկերութիւնը, ինչպէս մէկ ուրախ ու պարկեշտ կերպով խնտացընող մարդ մը :

Սարգս խնտաւ ու խնտացընել կը սիրէ . ու երբոր աս գեղեցիկ ու խելացի կերպովը չկրնար, կը սկսի փեղցըրփեղ խօսքերով, կամ ձեռքի կատակներով, կամ ուրիշի պակսութեանցը նմանութիւնը՝ ընելով խնտաւ ու խնտացընել, որ անպատշաճ ու փնասակար բաներ են : Ինչ զարմանալի բան է՝ երբոր մէկ ընկերութեան մը մէջ մէկը իր հանճարեղ